ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» «----------» 2019թ. N --- - Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ՖՈՒՉԻԿԻ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 3 ՇԵՆՔԻ Հ.38 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1/2 ԲԱԺՆԵՄԱՍ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 41-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է**

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին ք.Երևան, Աջափնյակ, Ֆուչիկի փողոց 2-րդ նրբանցք 3 շենք հ.38 հասցեի 36.8 քմ ընդհանուր մակերեսով բնակարանի Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 1/2 բաժնեմասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N17092019-01-0055 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Աստղիկ Բարեյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

**«ՖՈՒՉԻԿԻ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 3 ՇԵՆՔԻ Հ.38 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1/2 ԲԱԺՆԵՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Նախագծով նախատեսվում է Աստղիկ Բարեյանի կողմից զբաղեցրած ք.Երևան, Աջափնյակ, Ֆուչիկի փողոց 2-րդ նրբանցք 3 շենքի հ.38 բնակարանի (ընդհանուր մակերեսը՝ 36.8 քմ) Երևան համայնքի սեփականություն հանդիսացող 1/2 բաժնեմասի նկատմամբ ձևակերպել վերջինիս սեփականության իրավունքը:

Ֆուչիկի փողոցի 2-րդ նրբանցք 3 շենքի հ.38 բնակարանը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է Աստղիկ Բարեյանին և Երևան համայնքին՝ յուրաքանչյուրը 1/2 բաժնեմասով (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.17092019-01-0055 վկայական):

Մաշտոցի շրջխորհրդի գործկոմի 29.09.1994 թվականի թիվ 21/26 որոշմամբ թույլատրվել է նշված բնակարանը համատեղ սեփականության իրավունքով անհատույց հանձնել Խաչիկ Հովհաննիսյանին՝ ընտանիքի 4 անձով (Խաչիկ Ռուբիկի Հովհաննիսյան, Վարդուհի Բաղիշի Մովսեսյան, Միքայել Լևոնի Սարգսյան, Աստղիկ Գարսևանի Բարեյան):

Վարդուհի Մովսեսյանի և Միքայել Սարգսյանի մահից հետո նրանց բաժնեմասերի նկատմամբ ժառանգություն չի ձևակերպվել և որպես անժառանգ գույք, համաձայն քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածի, անցել է Երևան համայնքի սեփականությանը, իսկ Խաչիկ Հովհաննիսյանի մահից հետո նրա բաժնի ժառանգությունը ընդունել է Աստղիկ Բարեյանը:

ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված 16.10.2019թ. հ.ԱՏ-16102019-99-0036 տեղեկանքի համաձայն՝ Աստղիկ Գարսևանի Բարեյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված է միայն ք.Երևան, Աջափնյակ, Ֆուչիկի փողոց 2-րդ նրբանցք 3 շենքի հ.38 բնակարանի նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը՝ 1/2 բաժնեմասով: Վերջին հինգ տարվա ընթացքում վերջինիս կողմից կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում Հայաստանի Հանրապետությունում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի 4-րդ կետի և 41-րդ կետի 4-րդ ենթակետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքները, ուստի՝ վերոհիշյալ անձի սեփականության իրավունքը տարիներ շարունակ զբաղեցրած բնակելի տան նկատմամբ ձևակերպելու համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՖՈՒՉԻԿԻ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 3 ՇԵՆՔԻ Հ.38 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1/2 ԲԱԺՆԵՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Ֆուչիկի փողոցի 2-րդ նրբանցք 3 շենքի հ.38 բնակարանի Երևան համայնքի սեփականություն հանդիսացող 1/2 բաժնեմասն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՖՈՒՉԻԿԻ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 3 ՇԵՆՔԻ Հ.38 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 1/2 ԲԱԺՆԵՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Ֆուչիկի փողոցի 2-րդ նրբանցք 3 շենքի հ.38 բնակարանի Երևան համայնքի սեփականություն հանդիսացող 1/2 բաժնեմասն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**